## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ-ի միջև 2025թ. նոյեմբերի 06-ին կնքված N ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/8-3 ծածկագրով «ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի միջնակարգ դպրոցի վերանորոգում» և «ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդի Հ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոցի վերանորոգում» ծրագրերի ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան «05» 03 2026թ.

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը**, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն **Սարգիս Բաղինյանի**, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ**-ն, ի դեմս գործադիր տնօրեն **Գ. Բաղդասարյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև **2025թ. նոյեմբերի 06-ին կնքված N ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/8-3 ծածկագրով «ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի միջնակարգ դպրոցի վերանորոգում» և «ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդի Հ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոցի վերանորոգում» ծրագրերի ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման** պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետի դրույթը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի Հավելված թիվ 2-ը **ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի միջնակարգ դպրոցի վերանորոգում»** մասով շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելվածի 1-ի:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:
3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:
4. Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:
5. Սույն Համաձայնագրի դրույթները տարածվում են Պայմանագրի կնքման պահից հետո ծագած հարաբերությունների վրա:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ** | **«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ** |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31 | Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 11-36 |
| ՀՎՀՀ՝ 00846441 | ՀՎՀՀ՝ 01203702 |
| Զափաբաժին 10 Հ/Հ՝ 900011058485 | Հ/Հ՝ 24144000617900 |
| Զափաբաժին 11 Հ/Հ՝ 900011058402 | «Յունիբանկ» ԲԲԸ |
| Կենտրոնական գանձապետարան | |
| Գործադիր տնօրեն | Գործադիր տնօրեն |
| Ս. Բաղինյան | Գ. Բաղդասարյան |
| ------------------------ /ստորագրություն/ | ------------------------ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
**2025թ. նոյեմբերի 06-ին կնքված**
N «**ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/8-3**» ծածկագրով
ծառայությունների գնման պայմանագրի
«05» 03 2026թ.
կնքված Համաձայնագիր 2-ի

Հավելված N 2
«**2025թ. նոյեմբերի 06-ին** կնքված
ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/8-3 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | ԳՄԱ ծածկագիրը՝ (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 10 | 98111140/47 | «ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն | - | - | 924 188 | 924 188 | 924 188 | 924 188 | 924 188 | 924 188 | 924 188 | 924 188 | 924 188 | 924 188 | **924 188** |
| 11 | 98111140/ 37 | «ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն | - | - | 916 590 | 916 590 | 916 590 | 916 590 | 916 590 | 916 590 | 916 590 | 916 590 | 916 590 | 916 590 | **916 590** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
***Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ***
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
Չափաբաժին 10 Հ/Հ՝ 900011058485
Չափաբաժին 11 Հ/Հ՝ 900011058402
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Ս. Բաղինյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ**

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 11-36
ՀՎՀՀ՝ 01203702
Հ/Հ՝ 24144000617900

«Յունիբանկ» ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Գ. Բաղդասարյան

/ստորագրություն/
Կ.Տ